ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Մկրտչյան Թ., Մովսիսյան Մ., Կարապետյան Լ., Կարապետյան Ն., Պետրոսյան Ն. (2024), Խորհրդային Ադրբեջանում ապրող հայերի թվաքանակի առեղծվածը, *Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 2(5),* 157-175, DOI: 10.52174/29538114_2024.2-157
Ներկայացվել է խմբագրություն՝ 25.08.2024 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 29.08.2024 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 18.11.2024 թ.

ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
https://orcid.org/0000-0003-2057-8590

ՄԱՆՈՒԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի դեկան,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
https://orcid.org/0000-0003-0779-7000

ԼՈՒՍԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ բիզնես վարչարարության ամբիոնի դոցենտ
https://orcid.org/0000-0002-3894-4803

ՆԱՐԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0003-4978-6107

ՆԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ
https://orcid.org/0000-0003-0272-5868

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԱՊՐՈՂ ՀԱՅԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Հոդվածում ուսումնասիրվել է Խորհրդային Ադրբեջանում մինչ բռնի տեղահանումը բնակվող հայերի և հայկական ջարդերի հետևանքով բռնի տեղահանվածների թվաքանակի վերաբերյալ վիճակագրական և արխիվային փվյալների խզվածքի առեղծվածը:

1988–1992 թթ. Ադրբեջանից բռնի տեղահանված հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ անգամ պաշտոնական տեղեկատվությունը վստահելի չէ, քանի որ Ադրբեջանում մինչև տեղահանումը ապրած հայերի վերաբերյալ այլ արխիվային նյութերում շրջանառում են պաշտոնականից էականորեն տարբերվող տվյալներ, ուստի, առաջանում է հիմնավոր կասկած, որ հատկապես Խորհրդային Միության վերջին համամիութենական մարդահամարների ժամանակ Ադրբեջանում ապրող հայերի թվաքանակը ադրբեջանական իշխանությունները գիտակցաբար նվազեցրել են: Կասկածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ Հայաստան տեղափոխված բռնի տեղահանված հայերի թիվն ավելի մեծ է, քան նախքան տեղահանումն Ադրբեջանում ապրած հայերի թվաքանակը, այն դեպքում, երբ բավական մեծ թվով հայ ընտանիքներ Ադրբեջանից միանգամից բռնագաղթել են երրորդ երկրներ:

Բացի դրանից՝ տեղահանումը ադրբեջանական իշխանությունների թողտվությամբ ուղեկցվել է հայերի նկատմամբ կիրառվող բռնություններով, իսկ վերջին՝ 1989 թ. համամիութենական մարդահամարը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ արդեն մի շարք քաղաքներում և շրջաններում հայերի ջարդեր և տեղահանումներ էին եղել: Հետևաբար՝ Ադրբեջանի իշխանություններն ունեցել են առնվազն տեսանելի պատճառներ հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության խեղաթյուրման համար:

Հիմնաբառեր. *հայերի թվաքանակ, Խորհրդային Ադրբեջան, հայերի ջարդեր, համամիութենական մարդահամար, ազգային փոքրամասնություններ, տեղահանում*

JEL: J15, K49, R23

DOI: 10.52174/29538114_2024.2-157

Ներածություն: Ի պատասխան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) հայերի 1988 թ. մեկնարկած ձգտմանը՝ իրացնելու ինքնորոշման իրենց իրավունքը, Ադրբեջանում թափ առավ հայկական ջարդերի ալիքը՝ այնտեղ ապրող հայ բնակչության հանդեպ նախադեպը չունեցող դաժան սպանություններով, բռնություններով և կողոպուտով: Արդեն 1988 թ. փետրվարի 27–29-ը Սումգայիթում տեղի ունեցան հայերի զանգվածային ջարդեր ու տեղահանումներ:

1988 թ. նոյեմբերին Ադրբեջանում սկսվեց հայկական ջարդերի երկրորդ ալիքը. դրանցից խոշորները տեղի ունեցան Գյանջայում, Շամախիում, Շամխորում, Մինգեչաուրում: Նույն ժամանակահատվածում՝ 1988 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, տեղահանվեց Խանլարի, Դաշքեսանի, Շամխորի ու Գետաբեկի լեռնային և նախալեռնային մասերում գտնվող 50 հայկական բնակավայրերի, ինչպես նաև Գյանջայի 48-հազարանոց հայ բնակչությունը: 1988–1990 թթ. Ադրբեջանում հայ ազգաբնակչության նկատմամբ հալածանքների, բռնությունների, ջարդերի ու սպանությունների գագաթնակետը դարձան Բաքվի հայերի 1990 թ. հունվարի 13–20-ը զանգվածային սպանություններն ու վերջնական տեղահանումը[1]:

Մինչև 1988 թ. ազգամիջյան բախումները և հայերի բռնի տեղահանումը, Ադրբեջանի ԽՍՀ-ում ապրող հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ առկա են խիստ տարբերվող (ըստ տարբեր աղբյուրների), ոչ միասնական տվյալներ: Որոշ պաշտոնական աղբյուրներում հիշատակվում է մինչև 500.0

[1] Տե՛ս ԱՀ ԱԳՆ, http://www.nkr.am/hy/armenian-pogrom

հազ. հայ բնակչության վերաբերյալ տեղեկատվություն, որում ներառվում է ԼՂԻՄ հայ բնակչությունը, այլ աղբյուրներում հիշատակվում են 600.0 – 700.0 հազ. հայերի վերաբերյալ որոշ տվյալներ:

Հարկ է նշել, որ գրեթե բոլոր զինված հակամարտությունների և պատերազմների հետևանքով ի հայտ են գալիս բռնի տեղահանված անձինք, ինչի արդյունքում վերջիններս կրում են գույքային, բարոյական, ֆինանսական, ինչպես նաև այլ տնտեսական վնասներ: Սովորաբար, տեղահանվածների հանդեպ այն երկրներում, որտեղ վերջիններս բնակություն են հաստատում, սոցիալական, տնտեսական և այլ աջակցության ծրագրերի իրականացումը ենթադրում է, որ նրանք պետք է ստանան փախստականի կարգավիճակ՝ անցնելով համապատասխան գործընթաց, իսկ հակամարտությունների հանգուցալուծման և խաղաղության հաստատման ընթացքում նաև դիտարկվում են նրանց հայրենադարձության ապահովման հնարավորությունները և վնասի փոխհատուցման հիմնահարցերը: Հետևաբար՝ արդիական է դառնում Խորհրդային Ադրբեջանում ապրող հայ բնակչության իրական թվաքանակի պարզումը:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վեր հանել Խորհրդային Ադրբեջանում ապրող հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական և արխիվային տվյալների միջև առկա անհամապատասխանությունը՝ մատնանշելով Խորհրդային Միության վերջին համամիութենական մարդահամարի ժամանակ հայ բնակչության իրական թվաքանակի նվազեցված լինելու հանգամանքը: Հետագայում բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներն օգտագործվելու են Խորհրդային Ադրբեջանից բռնի տեղահանված հայերի տնտեսական վնասները տարբեր սցենարներով գնահատելու համար:

Գրականության ակնարկ: Նիդեռլանդների միջառարկայական ժողովրդագրական ինստիտուտի կողմից «Փախստականների կենսապայմանները Հայաստանում. հազարամյակի զարգացման ցուցանիշները և հաղթահարման վարքագիծը» զեկույցի համաձայն՝ 1988 թ. Խորհրդային Ադրբեջանից տեղահանված հայերի մեծամասնությունը կամ, ավելի ճշգրիտ՝ 81%-ը եղել է Ադրբեջանի խոշոր քաղաքներից (Բաքու, Կիրովաբադ (Գյանջա), Սումգայիթ), 16%-ը՝ միջին կամ փոքր քաղաքներից (Շամխոր, Խանլար, Մինգեչաուր և այլն) և միայն 3%-ը՝ գյուղական բնակավայրերից[2]:

1988 թ. ադրբեջանցիների կողմից իրականացված՝ խորհրդային հասարակարգի համար աննախադեպ՝ Սումգայիթի, Կիրովաբադի և Բաքվի հայերի զանգվածային ջարդերի հետ կապված կարելի է առանձնացնել Ադրբեջանից հայերի բռնի տեղահանման մի քանի փուլ[3].

---

[2] Տե՛ս George Groenewold and Jeannette Schoorl, Netherlands Interdisciplinary Demographic Institute, The Living Conditions of Refugeesin Armenia:Millennium Development Indicators andCopingBehaviour, Country report, The Hague, 23 November 2006, https://www.unhcr.org/statistics/STATISTICS/45adf1132.pdf, էջ 4:

[3] Տե՛ս **Ayunts A.,** Forced Displacement in the Nagorno-Karabakh Conflict. Return and Its Alternatives: Perspectives from Armenia, Անալիտիկոն, https://theanalyticon.com/en/%d0%bd%d0%be%d0%b2%d0%be%d1%81%d1%82%d0%b8-en/forced-

- փախստականների առաջին խումբը, որը կազմել է շուրջ 20 000 մարդ, ստիպված է եղել հեռանալ 1988 թվականի փետրվարի 26–29-ը Սումգայիթում տեղի ունեցած ջարդերից հետո,
- փախստականների երկրորդ ու ամենամեծ ալիքը վերաբերում է 1988 թվականի երկրորդ կեսին և տևել է մինչև 1989 թվականի վերջը՝ 215 000 բռնի տեղահանվածներ,
- երրորդ ալիքը սկսվել է 1990 թվականին Բաքվի կենտրոնում տեղի ունեցած բռնություններից հետո՝ շուրջ 45 000 մարդ:

1990–1991 թթ. ընկած ժամանակահատվածում հայաթափվել են Կիրովաբադը, Խանլարը և ԼՂԻՄ-ի Գետաշեն և Շահումյան, ինչպես նաև այլ բնակավայրեր: Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտման քաղաքականության հետևանքով 1988–1992 թվականներին իրենց մշտական բնակավայրերից տեղահանվել են ավելի քան 500 000 հայեր, որոնցից շուրջ 360 000-ն ապաստանել է Հայաստանում:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Հայաստանը 1988–1992 թթ. ընդունել է Ադրբեջանից բռնի տեղահանված ավելի քան 400 000 փախստականի[4]: Վ. Խոջաբեկյանի «ՀՀ բնակչության գաղթը պատմական ժամանակաշրջանից մինչև մեր օրերը» զեկույցի համաձայն՝ 1988–1989 թթ. Հայաստանում տեղավորվել են 419 000 փախստական և հարկադիր վերաբնակեցվածներ, ընդ որում՝ 360 000-ը Խորհրդային Ադրբեջանից, 48 000-ը՝ ԼՂԻՄ-ից, 8 000-ը՝ Աբխազիայից, 1 500-ը՝ Չեչնիայից, 900-ը՝ Ուզբեկստանից, 600-ը՝ Տաջիկստանից և այլ շրջաններից: Պետք է նշել, որ տեղահանումից և Հայաստան տեղափոխվելուց հետո Հայաստանում հիմնավորվել է 381 500 մարդ, այդ թվում՝ 72 000-ը կազմել են Ադրբեջանի սահմանամերձ շրջանների հարկադիր վերաբնակեցվածները[5]:

Ըստ ՀՀ Կառավարության հրապարակման՝ 1988–1992 թթ. միջէթնիկական հակասությունների սրման հետևանքով և ազգամիջյան բախումներից տուժել են Ադրբեջանում բնակվող շուրջ կես միլիոն ազգությամբ հայեր, որոնցից 408 000-ը բռնագաղթել է Հայաստան: Հետխորհրդային տարածաշրջաններում ծագած հակամարտությունների հետևանքով ևս 11 հազար հայ Խորհրդային Միության այլ հանրապետություններից հարկադրված է եղել ապաստանել Հայաստանում: Այդ տարիներին Հայաստանում հաշվառված է եղել ազգամիջյան բախումներից տուժած 311 000 փախստական[6]:

Պետք է նշել, որ Ադրբեջանից բռնի տեղահանված հայ համայնքը շուրջ երկուսուկես անգամ ավելի էր Հայաստանից տեղահանված ադրբեջանական համայնքից: Ընդ որում, Բաքվից տեղահանված հայ բնակչության գերակշիռ

---

displacement-in-the-nagorno-karabakh-conflict-return-and-its-alternatives-perspectives-from-armenia/

[4] Տե՛ս Refugees, https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2FPPRiCAqhKb7yhsgcjdm0xgERNaIXh22nhTUmkcqL7%2Bike7MKykS5CRt%2BqmtxgITHhf77Sx%2ByZ8tSw7NcJrOn5pkY0%2BVEYnxkPVIBe42hKvfd8cZuL%2FXR6yjFL

[5] Տե՛ս **Խոջաբեկյան Վ.,** ՀՀ բնակչության գաղթը պատմական ժամանակաշրջանից մինչև մեր օրերը, Ազգային սեմինար՝ ՀՀ սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության հիմնախնդիրները, ՀՀ կառավարման դպրոց, Եր., 2001, էջ 2:

[6] Տե՛ս ՀՀ Կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 14-ի N 56 նիստի արձանագրությունից քաղվածք, https://www.irtek.am/views/act.aspx?aid=12448

մասն ունեցել է բարձրագույն կրթություն և զբաղեցրել է ղեկավար պաշտոններ նավթարդյունաբերության ոլորտում, աշխատել է կրթական համակարգում: Թեև հստակ վիճակագրություն չկա հայ փախստականների՝ ըստ բնակավայրերի վերաբնակեցման մասին, սակայն նրանց մեծ մասը՝ 70%-ը, վերաբնակեցվել է Հայաստանի գյուղական վայրերում և սկսել է վարել իր համար անսովոր՝ գյուղական կենցաղ[7]:

Կան նաև այլ արխիվային նյութեր, ըստ որոնց Ադրբեջանում, նախքան տեղահանումը, ապրել է 600–700 հազ. հայ, ներառյալ ԼՂԻՄ-ը: Այսինքն՝ եթե նշված թվերից հանենք ԼՂԻՄ բնակչության 145 500 տվյալը, ապա մի դեպքում խոսքը շուրջ 450 000, մյուս դեպքում շուրջ 550 000 հայ բնակչության մասին է, որոնք նախքան տեղահանումն ապրել են Ադրբեջանում: Նման պնդումների համար հիմք է հանդիսացել Ադրբեջանի բնակավայրերի հեռախոսագրքերում հայ ընտանիքներին պատկանող հեռախոսահամարների թիվը: Ըստ այդմ՝ միայն խոշոր և փոքր քաղաքներում հայ ընտանիքների հեռախոսահամարների ընդհանուր թիվը 1987–1988 թթ. շուրջ 140–150 հազ. է: Եթե նկատի ունենանք Ադրբեջանում ապրող հայկական միջին ընտանիքի 4.2 կազմը, ապա կարելի է ենթադրել, որ միայն քաղաքներում ապրել է 590–630 հազ. հայ:

Այդուհանդերձ, Ադրբեջանում ապրող հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վերը բերված տեղեկատվությունը հիմնված է միայն դատողությունների վրա: Միևնույն ժամանակ, առկա են նաև օբյեկտիվ հիմքեր՝ կարծելու, որ Ադրբեջանում ապրող հայերի մասին պաշտոնական տեղեկատվությունը նույնպես կասկածելի է, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, ադրբեջանական իշխանություններն ունեցել են բավարար պատճառներ Խորհրդային Ադրբեջանում ապրող ազգային փոքրամասնությունների, մասնավորապես՝ հայերի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը խեղաթյուրելու համար:

Եթե Ադրբեջանում հայ բնակչության թվաքանակի փոփոխությունները, սկսած 1970 թ-ից, դիտարկենք 13.7‰ բնական հավելաճի տեսանկյունից, առանց ներքին միգրացիայի (այսինքն՝ Ադրբեջանից ԽՄ այլ հանրապետություններ և հակառակը), ապա 1988 թ-ին, մինչև բռնի տեղահանումը, Ադրբեջանում ապրող հայ բնակչությունը պետք է կազմեր 463 042 մարդ (առանց ԼՂԻՄ տվյալների): Մինչդեռ, 1970 թ. հետո հաջորդ՝ 1979 թ. համամիութենական մարդահամարի արդյունքներով, Ադրբեջանում ապրող հայերի թիվը (առանց ԼՂԻՄ տվյալների) նվազել է 10 000-ով: Դա նշանակում է, որ նշված 10 տարվա ընթացքում Ադրբեջանից դուրս է եկել շուրջ 59 500 հայ և տեղափոխվել ԽՍՀՄ այլ հանրապետություններ բնակության նպատակով: Նշված 1970–1979 թթ. ժամանակահատվածի համար սա ոչ բնորոշ իրավիճակ է, քանի որ այդ ընթացքում ԽՄ հանրապետությունների մեջ հայերի ներքին միգրացիոն հոսքերն ուղղված են եղել դեպի Ադրբեջանի ԽՍՀ, և այդ ընթացքում Ադրբեջանը առավելապես հայերին ընդունող հանրապետություն է եղել, այլ ոչ թե հակառակը: Հակառակ գործընթացները սկսվել են հետագայում՝ 1980-ականներին, և ուժգնացել երկրորդ կեսին:

---

[7] Տե՛ս International Protection Considerations Regarding Armenian Asylum-Seekers and Refugees, United Nations High Commissioner for Refugees (UNHCR) Geneva, September 2003, էջ 5, https://www.refworld.org/pdfid/3f5f27d14.pdf

Հետազոտության մեթոդաբանություն: Խորհրդային Ադրբեջանում ապրող հայերի թվաքանակի ուսումնասիրությունը ուղեկցվել է հայրենական և միջազգային գրականության, բնակչության թվաքանակի վերաբերյալ տարբեր տեղեկատվական աղբյուրների համեմատական վերլուծությամբ: Հաշվի առնելով հոդվածի նպատակը՝ հիմնականում կիրառվել են համեմատական ուսումնասիրությունների, ընդհանուր գիտական վերլուծության, խմբավորումների, ընդհանրացումների մեթոդները:

Որպես տեղեկատվական աղբյուր են ծառայել ԽՍՀ միութենական մարդահամարների տվյալները, վիճակագրական շտեմարանները, պաշտոնական հրապարակումները: Բացի վիճակագրական աղբյուրներից՝ հետազոտության ժամանակ ուսումնասիրվել են նաև մինչև 1988 թ. Ադրբեջանի ԽՍՀ-ում ապրող և 1988–1992 թթ. ընթացքում բռնի տեղահանված հայ բնակչության վերաբերյալ այլ արխիվային նյութեր:

Խորհրդային Ադրբեջանում բնակվող հայ բնակչության թվաքանակի ուսումնասիրությունը ներկայացվել է 1926 թ. առաջին համամիութենական մարդահամարից սկսած: Հայերի մասնաբաժինը ԽՍՀՄ հանրապետությունների բնակչության թվաքանակի մեջ հաշվարկվել է 1970, 1979 և 1989 թթ. մարդահամարների տվյալների հիման վրա, իսկ հայերի և ադրբեջանցիների բնական հավելաճի շարժընթացը դիտարկվել է 1959 թ., 1970 թ., 1979 թ. և 1989 թ. կտրվածքով: Խորհրդային Ադրբեջանից 1988–1992 թթ. բռնի տեղահանված և Հայաստան տեղափոխված հայ բնակչության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ բնակավայրերի, ներկայացվել է ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից փախստականների հաշվառման հիման վրա:

Ադրբեջանում ապրող հայ ընտանիքների թվաքանակի տվյալները 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքներով ներկայացնելը նպատակահարմար չէր, քանի որ մարդահամարի անցկացման ժամանակ մեծ թվով հայ ընտանիքներ արդեն բռնի տեղահանված են եղել, հետևաբար՝ հոդվածում ուսումնասիրվել են 1979 թ. մարդահամարի տվյալները, որոնք ավելի ճշգրիտ են արտացոլում հայ բնակչության թվաքանակը: Նույն ժամանակահատվածում ներկայացվել է նաև Խորհրդային Հայաստանում բնակվող ադրբեջանցիների թվաքանակը:

Վերլուծություն: Խորհրդային Ադրբեջանի գոյության ամբողջ ընթացքում ամենամեծ ազգային փոքրամասնությունը կազմել են ռուսներն ու հայերը, իսկ Խորհրդային Հայաստանում ամենամեծ ազգային փոքրամասնությունը կազմել են ադրբեջանցիները:

1926 թ. առաջին համամիութենական մարդահամարի տվյալներով Խորհրդային Ադրբեջանում հայերի թիվը, ներառյալ ԼՂԻՄ-ը, եղել է 282 004 մարդ կամ բնակչության 12%-ը, ընդ որում՝ 111 700-ը կազմել է ԼՂԻՄ-ի հայ բնակչությունը: Այսինքն՝ 1926 թ. Ադրբեջանի ԽՍՀ-ում (առանց ԼՂԻՄ-ի, որի ավելի քան 90%-ը կազմել է հայ բնակչությունը) ապրող հայերի թիվը 170 304 էր:

Հետագայում, մինչև 1970-ական թվականները, Ադրբեջանում ապրող հայերի թվաքանակը շարունակաբար աճել է: 1970 թ. Ադրբեջանական ԽՍՀ-ում ապրող հայ բնակչության թիվը հասել է 483.5 հազ.-ի (ներառյալ

ԼՂԻՄ-ը), որը կազմել է Ադրբեջանի այդ ժամանակվա բնակչության շուրջ 9.4%-ը: Առանց ԼՂԻՄ-ի՝ Ադրբեջանի հայերի թվաքանակը 1970 թ. կազմել է 362.4 հազ. մարդ:

Այսինքն՝ 1926–1970 թթ. ընթացքում Ադրբեջանում ապրող հայերի թիվը (առանց ԼՂԻՄ-ի) ավելացել է շուրջ 2.1 անգամ, իսկ նույն ժամանակահատվածում ԼՂԻՄ-ի հայ բնակչության թվաքանակն ավելացել է ընդամենը 8.4%-ով կամ 9.4 հազ. մարդով:

1970 թ. հետո Ադրբեջանում ապրող հայերի թիվը սկսել է նվազել թե՛ բացարձակ մեծությամբ, թե՛ Ադրբեջանի ամբողջ բնակչության մեջ ունեցած մասնաբաժնով: 1979 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Ադրբեջանում ապրող հայերի թիվը 1970 թ. համեմատությամբ նվազել է 8.0 հազ.-ով և դարձել է 475.5 հազ., որը կազմել է Ադրբեջանի բնակչության 7.9%-ը: Եթե 1979 թ. Ադրբեջանի հայ բնակչության թվաքանակից հանենք ԼՂԻՄ-ի 123.1 հազ.-ը, ապա, 1970 թ. համեմատությամբ, Ադրբեջանում ապրող հայերի թիվը նվազել է 10.0 հազ.-ով:

1979 թ-ից հետո Ադրբեջանի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ միակ պաշտոնական տեղեկատվությունը 1989 թ. համամիութենական մարդահամարն է, ըստ որի՝ 1989 թ. դրությամբ Ադրբեջանի հայ բնակչությունը կազմել է 390.5 հազ. մարդ (ներառյալ ԼՂԻՄ-ը) կամ Ադրբեջանի բնակչության 5.9%-ը: 1989 թ. ԼՂԻՄ-ի 145.5 հազ. հայ բնակչության թիվը նշված թվաքանակից հանելու դեպքում Ադրբեջանի հայ բնակչությունը կազմում է 245.0 հազ. մարդ:

Ընդհանրապես, հայերն ամենամեծ մասնաբաժին են ունեցել Խորհրդային Միության երկրներից Ադրբեջանի, Վրաստանի և Ռուսաստանի ԽՍՀ բնակչության կազմում:

Աղյուսակ 1-ում ներկայացված է 1970, 1979 և 1989 թթ. հայերի մասնաբաժինը ԽՍՀՄ հանրապետությունների բնակչության թվաքանակում:

1989 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Խորհրդային Միությունում ապրող շուրջ 4.6 մլն հայերից Ադրբեջանական ԽՍՀ-ում հայերի թիվը կազմել է 390.5 հազ., որը, 1970 թ. համեմատությամբ, նվազել է շուրջ 5 տոկոսային կետով, ՌԽՖՍՀ-ում աճել է 3 տոկոսային կետով և կազմել 11.5%, իսկ Հայաստանի ԽՍՀ-ում, աճելով 4.7 տոկոսային կետով, կազմել է 66.7 %:

Այս ամենը վկայում է, որ Խորհրդային Ադրբեջանից դեռևս 1970 թ. սկսվել է հայերի արտագաղթ դեպի Խորհրդային Հայաստան և ԽՍՀՄ այլ հանրապետություններ (աղյուսակ 2):

Աղյուսակ 1

Հայ բնակչության թվաքանակն ու մասնաբաժինը ԽՍՀՄ հանրապետությունների բնակչության թվաքանակում, 1970, 1979 և 1989 թթ.[8]

	1970 թ.			*1979 թ.*			*1989 թ.*		
	բնակչություն (հազ. մարդ)	*որից՝ հայեր (հազ. մարդ)*	*մասնա-բաժին (%)*	*բնակչություն (հազ. մարդ)*	*որից՝ հայեր (հազ. մարդ)*	*Մասնա-բաժին (%)*	*բնակչություն (հազ. մարդ)*	*որից՝ հայեր (հազ. մարդ)*	*մասնա-բաժին (%)*
ՌԽՖՍՀ	130079.2	298.7	0.2	137409.9	364.6	0.3	147021.9	532.4	0.4
Ուկրաինական ԽՍՀ	47126.5	33.4	0.1	49609.3	38.6	0.1	51452.0	54.2	0.1
Վրացական ԽՍՀ	4686.4	452.3	9.7	4993.2	448.0	9.0	5400.8	437.2	8.1
Ադրբեջանական ԽՍՀ	5117.1	483.5	9.4	6026.5	475.5	7.9	7021.2	390.5	5.6
Բելոռուսական ԽՍՀ	9002.3	2.4	0.03	9532.5	2.8	0.03	10151.8	4.9	0.05
Ուզբեկական ԽՍՀ	11959.6	34.5	0.3	15389.3	42.4	0.3	19810.1	50.5	0.3
Ղազախական ԽՍՀ	12848.6	12.5	0.1	14684.3	14.0	0.1	16464.5	19.1	0.1
Թուրքմենական ԽՍՀ	2158.9	23.1	1.1	2764.7	26.6	1.0	3522.7	31.8	0.9
Կիրգիզական ԽՍՀ	2932.8	2.7	0.1	3522.8	3.3	0.1	4257.8	4.0	0.1
Տաջիկական ԽՍՀ	2899.6	3.8	0.1	3806.2	4.9	0.1	5092.6	5.7	0.1
Մոլդովական ԽՍՀ	3568.9	1.3	0.04	3949.8	2.0	0.05	4335.4	2.9	0.07
Էստոնական ԽՍՀ	1356.1	0.6	0.04	1464.5	0.8	0.06	1565.7	1.7	0.11
Լիտվական ԽՍՀ	3128.2	0.5	0.02	3391.5	0.9	0.03	3674.8	1.6	0.05
Լատվիական ԽՍՀ	2364.1	1.5	0.06	2502.8	1.9	0.08	2666.6	3.1	0.12
Հայկական ԽՍՀ	2491.9	2208.3	88.6	3037.3	2725.0	89.7	3304.8	3083.6	93.3
Ընդամենը հայեր		**3559.2**			**4151.2**			**4623.2**	

[8] Կազմված է ըստ ԽՍՀՄ հանրապետությունների համապատասխան տարիների մարդահամարների տվյալների:

Աղյուսակ 2

Հայերի բաշխումն ըստ Խորհրդային Միության հանրապետությունների, 1970–1989 թթ. (%)[9]

Հայեր, որոնցից բնակվել են.	1970 թ.	1979 թ.	1989 թ.
Հայկական ԽՍՀ	62	65.6	66.7
ՌԽՖՍՀ	8.4	8.8	11.5
Վրացական ԽՍՀ	12.7	10.8	9.5
Ադրբեջանական ԽՍՀ	13.6	11.5	8.4
Ուկրաինական ԽՍՀ	0.9	0.9	1.2
Ուզբեկական ԽՍՀ	1.0	1.0	1.1
Թուրքմենական ԽՍՀ	0.6	0.6	0.7
Ղազախական ԽՍՀ	0.4	0.34	0.4
Տաջիկական ԽՍՀ	0.1	0.1	0.1
Բելոռուսական ԽՍՀ	0.07	0.1	0.1
Կիրգիզական ԽՍՀ	0.1	0.1	0.1
Լատվիական ԽՍՀ	0.04	0.05	0.1
Մոլդովական ԽՍՀ	0.04	0.05	0.1
Էստոնական ԽՍՀ	0.02	0.02	0
Լիտվական ԽՍՀ	0.46	0.48	0.48
Ընդամենը	100	100	100

1970-ականներից սկսած՝ Ադրբեջանում ապրող հայերի թվաքանակի նվազման թույլ արտահայտված միտումն արդեն 1980-ական թվականների երկրորդ կեսից սկսել է բավականին ուժգնանալ՝ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից հանրապետությունում ապրող հայերի նկատմամբ որոշակի բացասական տրամադրություններ գեներացնելու հետևանքով, ինչն արտահայտվել է հայ բնակչության՝ որպես ազգային փոքրամասնության նկատմամբ վարվող տեղահանման՝ ոչ բացահայտ քաղաքականության տեսքով: Դա առավել ընդգծված դիտվել է հատկապես մայրաքաղաքից հեռու շրջաններում և գյուղական բնակավայրերում, որտեղ հայ բնակչությունը համեմատաբար փոքրաթիվ է եղել:

Հարկ է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածը (1970–1989 թթ.) համարվում է բնակչության բարձր բնական հավելաճի ժամանակաշրջան, մասնավորապես՝ 1970–1979 թթ. և 1979–1989 թթ. բնակչության միջին տարեկան բնական հավելաճը Խորհրդային Ադրբեջանում կազմել է համապատասխանաբար՝ 25.1 ‰ և 21.4 ‰, իսկ Հայաստանում՝ 17.2 ‰ և 10.8 ‰ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Հայերի և ադրբեջանցիների բնական հավելաճի շարժընթացը, 1959–1989 թթ.[10]

տարեթիվ	ադրբեջանցիներ	միջին տարեկան հավելաճ (‰)	հայեր	միջին տարեկան հավելաճ (‰)
1959 թ.	2,939,728	-	2,786,912	-
1970 թ.	4,379,937	36.9	3,559,151	22.5
1979 թ.	5,477,330	25.1	4,151,241	17.2
1989 թ.	6,770,403	21.4	4,623,232	10.8

[9] Կազմված է ըստ՝ 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, ՀՀ վիճակագրություն, Եր., 1991:

[10] Կազմված է ըստ նույն աղբյուրի տվյալների:

Հետևաբար՝ Խորհրդային Ադրբեջանում հայ բնակչության թվաքանակի նվազումը կարելի է բացատրել կամ հայ բնակչության նկատմամբ վարվող ոչ բացահայտ տեղահանման, կամ Ադրբեջանի հայ բնակչության թվաքանակի արհեստական նվազեցման քաղաքականությամբ: Շատ ավելի մեծ է երկրորդի հավանականությունը[11]:

1959 թ. Խորհրդային Ադրբեջանում (առանց ԼՂԻՄ-ի) ապրող 332 036 հայ բնակչությունից, ինչը կազմել է ամբողջ բնակչության 9.3%-ը, քաղաքներում բնակվել է 218 802 մարդ կամ ամբողջ Ադրբեջանի հայ բնակչության 65.9%-ը: Քաղաքային հայ բնակչության 77.7%-ը կամ ամբողջ հայ բնակչության 51.2%-ը կազմում է Բաքու քաղաքի հայ բնակչությունը, իսկ հայերի մասնաբաժինը Բաքու քաղաքի ընդամենը բնակչության (987 228 մարդ) մեջ կազմել է 17.2%:

Ադրբեջանի՝ մեծությամբ երկրորդ՝ Կիրովաբադ (Գյանջա) քաղաքում 1959 թ. մարդահամարի տվյալներով ապրել է 37 462 հայ, ինչը կազմել է քաղաքի ամբողջ բնակչության 27.1%-ը կամ Ադրբեջանի ամբողջ հայ բնակչության 11.3%-ը:

Խորհրդային Ադրբեջանի հայաշատ շրջաններից են եղել Շամխորի (17 513 մարդ), Խանլարի (16 845 մարդ) և Դաշքեսանի (16 626 մարդ) շրջանները, որտեղ հայ բնակչության մասնաբաժինը կազմել է այդ շրջանների բնակչության համապատասխանաբար՝ 21.2%-ը, 51.7%-ը և 47.2%-ը:

1970 թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանի ԽՍՀ-ում, 1959 թ. համեմատությամբ, հայ բնակչության թվաքանակի 30 416-ով աճը (որի արդյունքում Ադրբեջանի հայ բնակչությունը դարձել է 362 452) բացառապես պայմանավորված է եղել քաղաքային բնակավայրերում հայ բնակչության թվաքանակի աճով (աղյուսակ 4): Նշված ժամանակահատվածում զուգահեռաբար նվազել է որոշ շրջանների և գյուղական բնակավայրերի հայ բնակչության թվաքանակը, մասնավորապես՝ Իսմայիլի, Դաշքեսանի, Միր-Բաշիրի շրջանների գյուղական բնակավայրերում:

Ինչպես տեսնում ենք, Խորհրդային Ադրբեջանում հայ բնակչության թվաքանակի նվազման միտումները պահպանվել են նաև հաջորդ տարիներին, մասնավորապես՝ 1989 թ. մարդահամարի տվյալներով (արդեն սկսվել էր բռնի տեղահանումը) հայ բնակչության թվաքանակը (առանց ԼՂԻՄ-ի) կազմել է 245 055 մարդ[12]:

Պետք է նշել, որ 1989 թ. համամիութենական մարդահամարն անցկացվել է հունվարի 12–19, որից հետո նախնական արդյունքները հրապարակվել են 1990 թ. մայիսին, իսկ արդեն պաշտոնական արդյունքները՝ 1991 թ.: Այսինքն՝ մարդահամարն անց է կացվել բավական բարդ պայմաններում, երբ Ադրբեջանի որոշ բնակավայրերում արդեն տեղի էին ունեցել բախումներ տեղի հայ բնակչության և ադրբեջանցիների միջև, իսկ մարդահամարի նախնական արդյունքները հրապարակվել են այն ժամանակ, երբ Ադրբեջանի ԽՍՀ-ից բռնի տեղահանվել էր շուրջ 250 000 հայ: Մարդահամարի վերջնական արդյունքների հրապարակման ժամանակ Ադրբեջանում հայերն ընդհանրապես շատ քիչ էին կամ գրեթե չէին մնացել:

---

[11] Տե՛ս **Харатян Г.,** Официальные этно-демографические показатели в Азербайджане в контексте поиска и кризиса идентичности азербайджанцев. М.: издательство «Центриздат», 2015, 136 էջ:

[12] Տե՛ս Ethno-Caucasus, https://www.ethno-kavkaz.narod.ru/russkiy.html

Աղյուսակ 4

Հայերի մասնաբաժինը Խորհրդային Ադրբեջանի (առանց ԼՂԻՄ-ի) բնակչության թվաքանակում՝ ըստ բնակավայրերի, 1959–1979 թթ.[13]

	1959 թ.			1970 թ.			1979 թ.		
բնակավայր	բնակչություն (հազ. մարդ)	որից՝ հայեր (հազ. մարդ)	մասնաբաժին (%)	բնակչություն (հազ. մարդ)	որից՝ հայեր (հազ. մարդ)	մասնաբաժին (%)	բնակչություն (հազ. մարդ)	որից՝ հայեր (հազ. մարդ)	մասնաբաժին (%)
Բաքու	987,228	170,074	17.2	1,265,515	207,464	16.4	1,533,235	215,807	14.1
Սումգայիթ	70,374	7,031	10.0	135,540	13,268	9.8	205,694	13,818	6.7
Գյանջա	138,239	37,462	27.1	190,188	41,020	21.6	231,691	40,741	17.6
Մինգեչաուր	33,657	4,235	12.6	43,092	5,174	12.0	59,163	5,147	8.7
Շամխոր	82,688	17,513	21.2	103,776	14,230	13.7	113,889	10,369	9.1
Դաշքեսան	35,222	16,626	47.2	35,666	12,118	34.0	33,566	7,325	21.8
Խանլար	32,592	16,845	51.7	71,991	16,247	22.6	76,628	13,975	18.2
Իսմայիլլի	40,679	4,038	9.9	51,596	3,308	6.4	55,249	2,377	4.3
Շահումյան	16,459	12,707	77.2	19,599	14,599	74.5	19,972	14,623	73.2
Միր-Բաշիր	29,929	2,665	8.9	41,739	2,588	6.2	47,726	2,169	4.5
Վարդաշեն	19,656	2,386	12.1	27,690	2,788	10.1	29,958	2,764	9.2
Այլ	2,080,588	40,454	1.9	2,980,376	29,648	1.0	3,457,563	23,295	0.7
Ընդամենը	3,567,311	332,036	9.3	4,966,768	362,452	7.3	5,864,334	352,410	6.0

[13] Сколько было беженцев от карабахского конфликта. Демографическое исследование, Кавказский Узел, https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/34379

Համաձայն ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից փախստականների հաշվառման արդյունքների՝ 1988–1992 թթ. Ադրբեջանից բռնի տեղահանվել և Հայաստան է տեղափոխվել 361 453 հայ, մինչդեռ բավական մեծ թվով հայ ընտանիքներ Ադրբեջանից տեղահանման հետևանքով միանգամից տեղափոխվել և բնակություն են հաստատել ԽՄ այլ երկրներում, առավելապես՝ Ռուսաստանի Դաշնությունում: Այդ ընտանիքների և դրանց թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի չէ, սակայն հենց այս փաստն է մինչև 1988 թ. Ադրբեջանում ապրող հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ պաշտոնական և այլ արխիվային նյութերում առկա էական տարբերությունների հիմքում:

Աղյուսակ 5

Հայ բնակչության թվաքանակը Ադրբեջանի ԽՍՀ խոշոր քաղաքներում և շրջաններում, 1988 թ.[14]

Քաղաքներ	Հայ բնակչության թիվը (մարդ)
Բաքու	215 807
Գյանջա	40 741
Սումգայիթ	13 522
Մինգեչաուր	5 741
Շրջաններ	
Աղդամ	388
Ախսու	1 174
Բարդա	413
Վարդաշեն	2 764
Դաշքեսան	7 325
Ջեբրայիլ	6 200
Զաքաթալա	884
Զանգելան	7 000
Իսմայիլլի	2 377
Ղազախ	751
Քասում-Իսմայիլ	938
Քելբաջար	7 200
Կուտկաշեն	478
Լաչին	7 800
Միր-Բաշիր	2 169
Ֆիզուլի	1 710
Խանլար	13 975
Շամխոր	10 369
Շաքի	1 091
Շամախի	408
Այլ շրջաններ և քաղաքներ	**10 228**
Ընդամենը	**361 453**

Աղյուսակ 5-ում ներկայացված է Խորհրդային Ադրբեջանից 1988–1992 թթ. բռնի տեղահանված և Հայաստան տեղափոխված հայ բնակչության վերաբերյալ տեղեկատվությունն ըստ բնակավայրերի, որը ձևավորվել է ՀՀ ՆԳՆ

[14] ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պաշտոնական կայքէջ, https://migration.am/general_information?fbclid=IwAR3g8HomSz5qtkgdgdFqv-S6d7c_IM68az0atgqI953W3Bn1RvuoanMjEcc

միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից փախստականների հաշվառման հիման վրա[15]:

Բավական հետաքրքիր պատկեր է ստացվում, եթե Ադրբեջանից բռնագաղթած հայերի թվի վերաբերյալ պաշտոնական և ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության հաշվառման տվյալները արտապատկերում ենք Ադրբեջանում ապրած հայ ընտանիքների թվաքանակի վրա: Ադրբեջանում ապրող հայ ընտանիքների թվաքանակի տվյալները 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքներով ներկայացնելը նպատակահարմար չէ, քանի որ մարդահամարի անցկացման ժամանակ մեծ թվով հայ ընտանիքներ արդեն բռնի տեղահանված են եղել: Ներկայացնենք 1979 թ. մարդահամարի տվյալները, ըստ որի, 1979 թ. Ադրբեջանական ԽՍՀ-ում ապրել է 93 814 հայ ընտանիք, ընդ որում՝ երկու անձից բաղկացած է եղել 18 790, 3 անձից՝ 16 991, 4 անձից՝ 21 132, 5 անձից՝ 17 501, 6 անձից՝ 10 670, 7 և ավելի անձից՝ 8 730 ընտանիք (գծապատկեր 1): Այսինքն՝ հայկական ընտանիքը, միջին հաշվով, կազմել է 4.2 մարդ:



Գծապատկեր 1. ***Ադրբեջանի ԽՍՀ-ում հայ ընտանիքների բաշխումն ըստ չափի, 1979 թ.***[16]

Համեմատության համար նշենք, որ 1979 թ. Հայկական ԽՍՀ-ում ապրել է 26 378 ադրբեջանցիների ընտանիք, ընդ որում՝ երկու անձից բաղկացած է եղել 2 715, 3 անձից՝ 2 646, 4 անձից՝ 3 322, 5 անձից՝ 3 790, 6 անձից՝ 4 239, 7 և ավելի անձից՝ 9 666 ընտանիք (գծապատկեր 2): Ադրբեջանական ընտանիքը, միջին հաշվով, կազմել է 5.7 մարդ: Բացի այդ՝ ադրբեջանցիների ընտանիքների 89.5%-ն ապրել է գյուղերում:

---

[15] 1988–1992 թթ. Ադրբեջանից բռնի տեղահանված և Հայաստան տեղափոխված հայ բնակչության ու Ադրբեջանում նրանց շարժական և անշարժ գույքի տվյալների հաշվառման հիման վրա ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ում ստեղծվել է տվյալների բազա:

[16] Կազմված է ըստ՝ Численность и состав населения СССР, по данным Всесоюзной переписи населения 1979 г.:



Գծապատկեր 2. ***Հայաստանի ԽՍՀ-ում ադրբեջանցի ընտանիքների բաշխումն ըստ չափի, 1979 թ.***[17]

Ինչ վերաբերում է Հայկական ԽՍՀ-ում ապրող ադրբեջանցիների ընդհանուր թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությանը, ապա 1979-ին, 1970 թ-ի համեմատությամբ, Հայկական ԽՍՀ-ում ապրող ադրբեջանցիների թվաքանակն աճել է 12 652 մարդով կամ 8.5%-ով՝ կազմելով 160 841 մարդ (աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Ադրբեջանցի բնակչության թվաքանակը Խորհրդային Հայաստանում՝ ըստ բնակավայրերի, 1970, 1979, 1989 թթ.[18]

Տարիներ	Ադրբեջանցի բնակչություն (մարդ)	Այդ թվում		Ադրբեջանցի բնակչության ընդհանուր թվաքանակում (%)		Հայկական ԽՍՀ բնակչության թվաքանակի մեջ ադրբեջանցիների տեսակարար կշիռ (%)
		քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական	
1970 թ.	148189	14590	133599	**9.8**	**90.2**	**5.9**
1979 թ.	160841	16819	144022	**10.5**	**89.5**	**5.3**
1989 թ.	84860	7139	77721	**8.4**	**91.6**	**2.6**

1979 թ. տվյալների համաձայն՝ ադրբեջանցիները Խորհրդային Հայաստանի քաղաքներում առավել շատ թվաքանակով բնակվել են Ղափանում՝ 3 368, Երևանում՝ 2 341, Մասիսում՝ 2 069: Պետք է նշել, որ Խորհրդային Հայաստանի շրջաններում 1989 թ. տարեսկզբի դրությամբ բնակվել է 77 721 ադրբեջանցի, որոնց շուրջ 90%-ն ապրել է հետևյալ 4 շրջաններում՝ Վարդենիս՝ 32%, Ամասիա՝ 22%, Կրասնոսելսկ՝ 17.8%, Մասիս՝ 18%[19]:

Ինչպես արդեն նշել ենք, 1988–1992 թթ. էթնիկ բախումների հետևանքով Խորհրդային Ադրբեջանից հայ բնակչության զանգվածային ջարդերն ու բռնի

[17] Կազմված է ըստ նույն աղբյուրի:

[18] Կազմել են հեղինակները ըստ՝ 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, ՀՀ վիճակագրություն, Եր., 1991, էջ 103:

[19] Հաշվարկված է ըստ՝ 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, ՀՀ վիճակագրություն, Եր., 1991, էջ 108-142:

տեղահանումը ուղեկցվել են վերջիններիս ունեզրկմամբ և թալանով: Համաձայն տարբեր արխիվային աղբյուրների՝ Ադրբեջանում մինչև 1988 թ. բնակվող հայերը բռնի տեղահանման հետևանքով այնտեղ թողել են շուրջ 92 000 տուն և բնակարան, որոնց համար Ադրբեջանի կառավարությունից որևէ փոխհատուցում չի տրվել: Համեմատելու համար նշենք, որ ադրբեջանցիները Խորհրդային Հայաստանում թողել են շուրջ 32 000 տուն և բնակարան, որոնց դիմաց 1989 թ-ին Հայաստանի ԽՍՀ կառավարությունը վճարել է 71 միլիոն ռուբլի փոխհատուցում[20]:

Սովորաբար, բռնի տեղահանվածների պարագայում հայրենադարձության ապահովման համատեքստում դիտարկվում են՝ արդյոք տեղահանվածները ցանկանում են կամ ի վիճակի են վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը, իսկ վնասի փոխհատուցման գնահատումների ժամանակ անհրաժեշտություն է առաջանում որոշելու, թե բռնի տեղահանման պատճառով ինչպիսի և ինչ չափերի վնասներ են կրել տեղահանվածները, որքան է նրանց թիվը: Թերևս այս հիմնախնդիրների համատեքստում է թաքնված Խորհրդային Ադրբեջանում հայերի թվաքանակի վերաբերյալ խիստ տարբերվող տվյալների առեղծվածը:

Եզրակացություն: Խորհրդային Ադրբեջանի գոյության ամբողջ ընթացքում ամենամեծ ազգային փոքրամասնությունը կազմել են ռուսներն ու հայերը, իսկ Խորհրդային Հայաստանում ամենամեծ ազգային փոքրամասնությունը եղել են ադրբեջանցիները:

1926–1970 թթ. ընթացքում Ադրբեջանում ապրող հայերի թվաքանակը (առանց ԼՂԻՄ-ի) ավելացել է շուրջ 2.1 անգամ: 1970-ականներից հետո Ադրբեջանում ապրող հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ պաշտոնական և այլ աղբյուրների միջև սկսել են առաջանալ զգալի տարբերություններ: Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ 1970-ականներից հետո Ադրբեջանի հայերի թվաքանակը սկսել է նվազել, իսկ ոչ պաշտոնական աղբյուրների համաձայն՝ բնակչության թվաքանակի աճը շարունակվել է գրեթե նույն տեմպերով, ինչ եղել է մինչև 1970-ականները:

Եթե Ադրբեջանում հայ բնակչության թվաքանակի փոփոխությունները, սկսած 1970 թ-ից, դիտարկենք 13.7‰ բնական հավելաճի տեսանկյունից, առանց ներքին միգրացիայի (այսինքն՝ Ադրբեջանից ԽՄ այլ հանրապետություններ և հակառակը), ապա 1988 թ-ին, մինչև բռնի տեղահանումը, Ադրբեջանում ապրող հայ բնակչությունը պետք է կազմեր 463 042 մարդ (առանց ԼՂԻՄ-ի):

1979 թ-ից հետո Ադրբեջանի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ միակ պաշտոնական տեղեկատվությունը եղել է 1989 թ. համամիութենական մարդահամարը, ըստ որի՝ 1989 թ. դրությամբ Ադրբեջանի հայ բնակչությունը կազմել է 390.5 հազ. մարդ (ներառյալ ԼՂԻՄ-ը): Չպետք է մոռանալ, որ մարդահամարն անց է կացվել հունվարի 12–19-ը, որից հետո նախնական արդյունքները հրապարակվել են 1990 թ. մայիսին, իսկ արդեն պաշտոնական

[20] Տե՛ս Mr. ATKINSON, United Kingdom, European Democratic Group, REPORT on the humanitarian situation of the refugees and displaced persons in Armenia and Azerbaijan, 14 February 1995, Doc. 7250, https://assembly.coe.int/nw/xml/XRef/X2H-Xref-ViewHTML.asp?FileID=6823&lang=EN

արդյունքները՝ 1991 թ.: Այսինքն՝ մարդահամարի նախնական արդյունքները հրապարակվել են այն ժամանակ, երբ Ադրբեջանի ԽՍՀ-ից բռնի տեղահանվել էր շուրջ 250 000 հայ: Մարդահամարի վերջնական արդյունքների հրապարակման ժամանակ Ադրբեջանում հայերը ընդհանրապես շատ քիչ էին կամ գրեթե չէին մնացել:

Ընդհանուր առմամբ, Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտման քաղաքականության հետևանքով 1988–1992 թթ. իրենց մշտական բնակավայրերից տեղահանված հայերի թվաքանակի վերաբերյալ տվյալները տատանվում են 400 000–500 000-ի սահմաններում, որից 360 000-ը՝ Խորհրդային Ադրբեջանից: Ըստ Ադրբեջանի բնակավայրերի հեռախոսագրքերում հայ ընտանիքներին պատկանող հեռախոսահամարների թվաքանակի՝ միայն խոշոր և փոքր քաղաքներում հայ ընտանիքների հեռախոսահամարների ընդհանուր թիվը 1987–1988 թթ. կազմել է շուրջ 140–150 հազ.: Եթե նկատի ունենանք Ադրբեջանում ապրող հայկական միջին ընտանիքի 4.2 կազմը, ապա կարելի է ենթադրել, որ միայն քաղաքներում ապրել է 590-630 հազ. հայ:

Հարկ է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածը (1970–1989 թթ.) համարվում է բնակչության բարձր բնական հավելաճի ժամանակաշրջան, մասնավորապես՝ 1970–1979 և 1979–1989 թթ. բնակչության միջին տարեկան բնական հավելաճը Խորհրդային Ադրբեջանում կազմել է համապատասխանաբար՝ 25.1 և 21.4 պրոմիլ, իսկ Հայաստանում՝ 17.2 և 10.8 պրոմիլ: Հետևաբար՝ Խորհրդային Ադրբեջանում հայ բնակչության թվաքանակի նվազումը կարելի է բացատրել Ադրբեջանի հայ բնակչության թվաքանակի արհեստական նվազեցման քաղաքականությամբ: Ադրբեջանի իշխանություններին շահավետ էր օգտվել ստեղծված քաոսային վիճակից և խեղաթյուրել հայերի թվաքանակի վերաբերյալ տվյալները՝ իրենց բնորոշ, պատմականորեն փաստարկված ազգային վարքագծի համաձայն: Ադրբեջանն ուներ առնվազն տեսանելի պատճառներ հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության խեղաթյուրման համար, քանի որ վերջիններիս կրած տնտեսական վնասների մեծության գնահատման հիմքում բնակչության թվաքանակի տվյալներն են:

Օգտագործած գրականություն

1. ԱՀ ԱԳՆ, http://www.nkr.am/hy/armenian-pogrom
2. 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, ՀՀ վիճակագրական, Եր., 1991:
3. Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1989 թվականին. վիճակագրական տարեգիրք, https://www.armstat.am/am/?nid=586&year=1989
4. ՀՀ Կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 14-ի N 56 նիստի արձանագրությունից քաղվածք, https://www.irtek.am/views/act.aspx?aid=12448
5. ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պաշտոնական կայքէջ, https://migration.am/general_information?fbclid=IwAR3g8HomSz5qtkgdgdFqv-S6d7c_IM68az0atgqI953W3Bn1RvuoanMjEcc:

6. Խոջաբեկյան Վ., ՀՀ բնակչության գաղթը պատմական ժամանակաշրջանից մինչև մեր օրերը, Ազգային սեմինար՝ ՀՀ սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության հիմնախնդիրները, ՀՀ կառավարման դպրոց, Եր., 2001:
7. Животовская И.Г. (2003). Особенности приватизации государственной собственности в Азербайджане, https://cyberleninka.ru/article/n/osobennosti-privatizatsii-gosudarstvennoy-sobstvennosti-v-azerbaydzhane
8. Народное хозяйство Азербайджанской ССР в 1988 г., Статистический ежегодник. Государственный комитет Азербайджанской ССР по статистике, https://istmat.org/statistics
9. Численность и состав населения СССР, по данным Всесоюзной переписи населения 1979 г.
10. Ayunts A., Forced Displacement in the Nagorno-Karabakh Conflict. Return and Its Alternatives: Perspectives from Armenia, https://theanalyticon.com/en/%d0%bd%d0%be%d0%b2%d0%be%d1%81%d1%82%d0%b8-en/forced-displacement-in-the-nagorno-karabakh-conflict-return-and-its-alternatives-perspectives-from-armenia/
11. Ethno-Caucasus, http://www.ethno-kavkaz.narod.ru/
12. Groenewold George and Schoorl Jeannette, Netherlands Interdisciplinary Demographic Institute, The Living Conditions of Refugees in Armenia: Millennium Development Indicators and Coping Behaviour, Country report, The Hague, 23 November 2006, https://www.unhcr.org/statistics/STATISTICS/45adf1132.pdf
13. International Protection Considerations Regarding Armenian Asylum-Seekers and Refugees, United Nations High Commissioner for Refugees (UNHCR) Geneva, September 2003, p. 5, https://www.refworld.org/pdfid/3f5f27d14.pdf
14. Mr. ATKINSON, United Kingdom, European Democratic Group, REPORT on the humanitarian situation of the refugees and displaced persons in Armenia and Azerbaijan, 14 February 1995, Doc. 7250, https://assembly.coe.int/nw/xml/XRef/X2H-Xref-ViewHTML.asp?FileID=6823&lang=EN
15. Unification of Discount Rates Used in External Debt Analysis for Low-Income Countries (2013). https://www.imf.org/en/Publications/Policy-Papers/Issues/2016/12/31/Unification-of-Discount-Rates-Used-in-External-Debt-Analysis-for-Low-Income-Countries-PP4824
16. UNITED NATIONS Conciliation Commission for PALESTINE, Noteon Compensation for the Property of Refugees who decide Not to Return to their Homes (Working Document prepared by the Secretariat), https://www.un.org/unispal/document/auto-insert-210624/

ТАТУЛ МКРТЧЯН
Проректор по науке АГЭУ, доктор экономических наук, профессор

МАНУК МОВСИСЯН
Декан факультета управления (менеджмента) АГЭУ,
кандидат экономических наук, доцент

ЛУСИНЕ КАРАПЕТЯН
Доцент кафедры бизнес - администрирования АГЭУ,
кандидат экономических наук

НАРЕК КАРАПЕТЯН
Преподаватель кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук

НАРИНЕ ПЕТРОСЯН
Аспирант кафедры макроэкономики АГЭУ

Загадка численности армян, проживавших в Советском Азербайджане.– В статье рассматривается загадка пробела в статистических и архивных данных о численности армян, проживавших в Советском Азербайджане до насильственного переселения и о численности насильственно переселенных в результате погромов армян.

Даже официальная информация о численности армян, насильственно переселенных из Азербайджана в 1988-1992 гг., не является достоверной, поскольку другие архивные материалы об армянах, проживавших в Азербайджане до насильственного переселения, существенно отличаются от официальных данных, то есть появляется обоснованное сомнение в том, что особенно в период последней Всесоюзной переписи населения Советского Союза азербайджанские власти намеренно сокращали численность армян, проживавших в Азербайджане. Сомнение обосновано тем фактом, что число вынужденно переселенных армян, переехавших в одну только Армению, превышает численность армян, проживавших в Азербайджане до насильственного переселения, в том случае, если довольно большое число армянских семей эмигрировали из Азербайджана в третьи страны.

Кроме того, с разрешения властей Азербайджана переселение сопровождалось насилием в отношении армян, а последняя Всесоюзная перепись 1989 года проходила в то время, когда уже имели место массовые убийства и насильственное переселение армян в ряде городов и регионов. Следовательно, у властей Азербайджана были как минимум видимые причины для искажения информации об армянском населении.

Ключевые слова: *численность армян, Советский Азербайджан, массовые убийства армян, Всесоюзная перепись населения, национальные меньшинства, переселения*
JEL: J15, K49, R23
DOI: 10.52174/29538114_2024.2-157

TATUL MKRTCHYAN
Vice-rector for Science at ASUE, Doctor of Economics, Professor

MANUK MOVSISYAN
Dean of the Department of Management at ASUE,
PhD in Economics, Associate Professor

LUSINE KARAPETYAN
Associate Professor of the Chair of Business
Administration at ASUE, PhD in Economics

NAREK KARAPETYAN
Lecturer at the Chair of Macroeconomics at ASUE,
PhD in Economics

NARINE PETROSYAN
PhD Student at the Chair of Macroeconomics at ASUE

The Mystery of the Number of Armenians Living in Soviet Azerbaijan.– The paper examines the gap in statistical and archival data regarding the number of Armenian inhabitants living in Soviet Azerbaijan before their forced displacement, as well as the number of Armenians forcibly displaced due to massacres.

Even the official information regarding the number of the Armenian population forcibly displaced from Azerbaijan during the years 1988-1992 is not accurate, as there is a significant discrepancy between the official data and the data found in other archival sources relating to the Armenian population lived in Azerbaijan before their displacement. Hence, a reasonable doubt emerges that especially during the last all-union censuses of the Soviet Union Azerbaijani authorities deliberately reduced the number of Armenian inhabitants. The doubt is supported by the observation that the number of forcibly displaced persons, who moved to Armenia is bigger than the number of the Armenian population living in Azerbaijan before the displacement in the case when quite a big number of Armenian families forcibly migrated to third countries from Azerbaijan.

Moreover, with the connivance of Azerbaijani authorities, the displacement was accompanied by violence against Armenians. The last all-union census of 1989 was held when Armenian massacres and displacement of the Armenian population had already taken place in some regions and cities. Therefore, Azerbaijani authorities had at least visible reasons to distort the information regarding the Armenian population.

Keywords: *number of Armenians, Soviet Azerbaijan, Armenian massacres, all-union census, national minorities, displacement*
JEL: J15, K49, R23
DOI: 10.52174/29538114_2024.2-157